*Նախագիծ*
*Երկրորդ ընթերցում*

Խ-023-26.02.2019-ՖՎ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ք Ը
# ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 06-ի օրենսգրքի 169[14]-րդ հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Առանց համապատասխան գրանցման (լիցենզիայի) չթույլատրված կամ օրենքով արգելված բառերի և լիցենզիա չունեցող անձանց կողմից որոշակի բառերի օգտագործումն իր անվանման մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն».

լրացնել նոր 2-րդ մասով՝

«2. Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա չունեցող անձանց կողմից «վարկ», «վարկավորում», «կրեդիտ», «կրեդիտավորում» բառերի կամ այդ գործունեությունը բնութագրելու համար կամ այդ գործունեության իրականացման նպատակով «փոխառություն», «փող», «դրամ», «փոխառության տրամադրում», «դրամի տրամադրում», «գումար», «գումարի տրամադրում», «փողի տրամադրում», «ֆինանս», «ֆինանսավորում», «ֆինանսների տրամադրում», բառերի կամ դրանց հոլովածների և ածանցյալների օգտագործումը իր անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում, ինչպես նաև լրատվության միջոցների, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային հաղորդակցման ցանկացած այլ միջոցների օգտագործմամբ ներկայացվող գովազդներում օգտագործումը, գովազդ իրականացնողներին կամ գովազդելուն աջակցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը տուգանքի նշանակման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 06-ի օրենսգրքի 169[14] -րդ հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Առանց համապատասխան գրանցման (լիցենզիայի) չթույլատրված կամ օրենքով արգելված բառերի եւ լիցենզիա չունեցող անձանց կողմից որոշակի բառերի օգտագործումն իր անվանման մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որեւէ կերպ աջակցելը գովազդելուն».

Լրացնել նոր 2-րդ մասով՝

«2. Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա չունեցող անձանց կողմից «վարկ», «վարկավորում», «կրեդիտ», «կրեդիտավորում» բառերի կամ այդ գործունեությունը բնութագրելու համար կամ այդ գործունեության իրականացման նպատակով «փոխառություն», «փող», «դրամ», «փոխառության տրամադրում», «դրամի տրամադրում», «գումար», «գումարի տրամադրում», «փողի տրամադրում», «ֆինանս», «ֆինանսավորում», «ֆինանսների տրամադրում» բառերի կամ դրանց հոլովաձեւերի եւ ածանցյալների օգտագործումը իր անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում, ինչպես նաեւ լրատվության միջոցների, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային հաղորդակցման ցանկացած այլ միջոցների օգտագործմամբ ներկայացվող գովազդներում օգտագործումը, գովազդ իրականացնողներին կամ գովազդելուն աջակցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը տուգանքի նշանակման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Deleted:** Նույն հոդվածը

**Deleted:** Լիազոր մարմնի

**Deleted:** վարկային

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին ( ԽՆ-023-26.02.2019-ՖՎ-011/1) օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր և բանավոր առաջարկների**

| ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ/ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերություն | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության համարակալումը խմբագրել՝համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 14-րդ հոդվածի պահանջներին, ինչպես նաև | Ընդունելի է: Տեխնիկական թերություն է: | Ընդունված է: |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածից հանել «նույն հոդվածը» բառերը: | Ընդունելի է: | Ընդունված է: |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածից հանել«լիազոր մարմնի կողմից վարկային գործունեություն իրականացնելու» բառերը՝ նկատի ունենալով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում սահմանված չէ թե որ մարմինն է հանդիսանում լիազոր: | Ընդունելի է մասնակի: Համաձայնվելով առաջարկության հեղինակների հետ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում սահմանված չէ թե որ մարմինն է հանդիսանում լիազոր, օրենքի նախագծի հեղինակների կողմից առաջարկվում է. նախագծի 1-ին հոդվածի «լիազոր մարմնի կողմից վարկային | Ընդունված է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | գործունեություն իրականացնելու» բառերը փոխարինել.«Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու» բառերով: | |
| ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս | Նախագծի 1-ինհոդվածի 2-րդ մասում լրացնել «ֆինանս», «ֆինանսավորում» և «ֆինանսների տրամադրում» բառերը՝ դիսպոզիցիան հստակեցնելու նպատակով: | Ընդունելի է: | Ընդունված է: |
| Պատգամավոր՝ Մանե Թանդիլյան | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածի «լիազոր մարմնի կողմից վարկային գործունեություն իրականացնելու» բառերը փոխարինել.«Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու» բառերով: | Ընդունելի է: | Ընդունված է: |